ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2019/66

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ

Բողոք բերող՝ «Ռոմա» ՍՊԸ

Երրորդ անձ՝ «Վիոլա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

Բողոք բերող՝ «Ռոմա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Հարությունյանի

Երրորդ անձ՝ «Վիոլա» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի, Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2019/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, բուժսարքավորումների և պարագաների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ռոմա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 20.09.2019թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Անվավեր ճանաչել «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2019/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.09.2019թ.-ի թիվ 1 արձանագրությամբ կայացված որոշումը 25-րդ չափաբաժնի մասով,

2. Պարտավորեցնել «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2019/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին կայացնել «Ռոմա» ՍՊԸ-ին ընթացակարգի 25-րդ չափաբաժնով որպես առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշում:

3. Վերացնել «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2019/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը 25-րդ չափաբաժնի մասով «Վիոլա» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասով:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 18.09.2019թ.-ին:

19.09.2019թ.-ին այն վերադարձվել է՝ բողոքում առկա խախտումները վերացնելու համար:

Բողոքը կրկին՝ վերադարձնելուց հետո Բողոքներ քննող անձին է մակագրվել 20.09.2019թ.-ին:

23.09.2019թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 26.09.2019թ.-ին ու 04.10.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

04.10.2019թ. -ին «Վիոլա» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

Բողոքի քննությունն ավարտվել է 04.10.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 17.10.2019թ.-ին:

2. <u>«Ռոմա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Ռոմա» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«11 սեպտեմբերի 2019թ. տեղի է ունեցել («Մարտունի բժշկական կենտրոն» ՓԲԸ կարիքների համար «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2019.18» ծածկագրով էլեկտրոնային գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստ, որի

արդյունքում կայացված N1 արձանարության մեջ տեղ գտած տվյալների համաձայն 25 - չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Վիոլա» ՍՊԸ-ն:

«Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

Սույն հոդվածից հետևում է, որ բոլոր այն դեպքերում, երբ ենթակա է վճարման նաև ԱԱՀ, վերջինս նշվում է առանձին տողով:

Ըստ «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1317-Ն որոշման թիվ 3 հավելվածով հաստատվել է դոնորային արյան եվ դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի եվ բժշկական նշանակության ապրանքների օտարման, բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության եվ սպասարկման շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման՝ ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակը:

Ըստ Հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի՝ ավելացված արժեքի հարկից ազատված են դեղերի պատրաստման, բուժման, ախտորոշիչ հետազոտությունների անցկացման, վերականգնողական բուժման և այլ բնույթի բժշկական օգնության ու սպասարկման ծառայություններ իրականացնելու համար անհրաժեշտ բժշկական հատուկ և օժանդակ ապարատները, գործիքները, տրանսպորտային միջոցները, սարքերը և այլ սարքավորում: Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնության կիրառության նպատակով բժշկական տեխնիկային դասվում են՝ ներմուծվող այն տեխնիկան և սարքերը, որոնց ուղեկցող փաստաթղթերում (տեխնիկական անձնագիր, հաշվարկային և բեռնառաքման այլ փաստաթուղթ) նշված է, որ դրանք նախատեսված են բժշկական օգնության և սպասարկման համար:

Տվյալ դեպքում 25 չափաբաժնով ապրանքը, համաձայն վերջինիս բժշկական նշանակության ապրանք է և չի հանդիսանում ԱԱՀ-ով հարկման օբյեկտ: Հետևաբար նշված ապրանքի համար ԱԱՀ չի հաշվարկվում և չի գանձվում:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը «Ռոմա» ՍՊԸ կողմից 25 չափաբաժնի համար առաջարկվել էր հետևյալ գինը՝ 4.360.000 ՀՀ դրամ՝ առանց լրացնելու ԱԱՀ-ի փողը՝ ելնելով վերագրյալից:

Ի տարբերություն դրա՝ «Վիոլա» ՍՊԸ կողմից նշվել էր գնային առաջարկում 3.828.000 ՀՀ դրամ և առանձին փողով 765.600 ՀՀ դրամ՝ որպես ԱԱՀ գծով վճարվելիք գումարի չափ, որն իրականում չի առաջանում:

Այսինքն՝ 1. ՝ «Վիոլա» ՍՊԸ կողմից գնային առաջարկը ներկայացվել է սխալ, ԱԱՀ-ով չհարկվող ապրանքի համար նախատեսվել է ԱԱՀ վճարում՝ առանձին փողով նշելով դրա չափը:

2. Ստացվում է, որ հանրագումարի արդյունքում Գնորդի կողմից վճարման ենթակա գումարը կազմելու է 4.593.600: Այսինքն՝ Գնորդի կողմից վճարվելու է նաև 765.600 ՀՀ դրամ ԱԱՀ, որը սակայն չի առաջանում տվյալ ապրանքի համար: Բացի այդ, քանի որ սույն ապրանքը չի հանդիսանում ԱԱՀ-ով հարկվող Գնորդի կողմից վճարվելու պարագայում լինելու է վերջնական կորստյալ գումար, ուստի այն դեբետագրելու հնարավորություն չի լինելու:

Այսինքն, գնորդ կողմը տվյալ դեպքում հանդիսանալու է վերջնական սպառող և որևէ տեղից վճարված ԱԱՀ-ն հետ ստանալու կամ հաշվանցելու իրավական գործիք չի ունենալու:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 3 րդ հոդվածի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Տվյալ դեպքում նախապատվությունը դեբեդագրվելու ներուժ չունեցող գնային առաջարկին տալով խախտվել է գնումների ընթացակարգն առհասարակ կազմակերպելու բուն նպատակը, քանի որ ձեռք բերումը չի լինելու տնտեսող, արդյունավետ և օգտավետ, քանի որ մեր առաջարկը փաստացի ավելի տնտեսող է , արդյունավետ և օգտավետ:

Սույն գործով գնման առարկա է հանդիսացել ավտոմատ բիոքիմիական վերլուծիչ հետևյալ բնութագրով՝ Չափման մեթոդներ՝ ոչ պակաս քան ծայրակետ, կինետիկ, ֆիկսված ժամանակ:Կատարվող հետազոտություններ՝ ոչ պակաս քան ASAT, ALAT, Glucose, Crea, Urea, UA, Chol, TG, Alb, TP, Microalbumin, Bil T,Bil D, HDL, LDL, Ethanol, Lactate, Urine proteine, Bile acid, Amylase, ALP, GGT, LDH, CK, CK-MB, HBDH, Lipase, ACP, Cholinesterase, Ca arsenazo, Mg, Fe, UIBC, Phosphorus, IgA, IgM, IgG, IgE, CRP, RF, ASo, C3, C4, Apolipoprotein,, Transferin, AntithrombinIII, HbA1C, D-Dimer, Cystatin C, Ferritin, Myoglobin, AFP, α1 microglobulin Չափման տիրույթ՝ 0-3,5 Abs Օգտագործվող ռեագենտներ՝ բաց

համակարգ (ցանկացած արտադրողի ռեագենտներով աշխատելու հնարավորություն): Արտադրողականությունը՝ ոչ պակաս քան 100 թեստ 1 ժամում: Աշխատանքի ընթացքում նմուշի, հետազոտությունների և ռեագենտների ավելացնելու հնարավորություն: Աշխատանքային ծավալների տիրույթներ՝ Նմուշի ծավալը՝ 3-45 մկլ տիրույթում աշխատելու հնարավորություն, 0.5մկլ ճշգրտությամբ Ռեագենտի ծավալը՝ 30-400 մկլ տիրույթում աշխատելու հնարավորություն, 1մկլ ճշգրտությամբ Ռեակցիոն ծավալը՝ 180-500 մկլ տիրույթում աշխատելու հնարավորություն Սառնարան ռեագենտների համար՝ սառնարանի առկայություն (24 ժամ աշխատելու հնարավորությամբ) Խառնիչ՝ խառնիչի առկայություն Թերմոստատ՝ ներկառուցված թերմոստատի առկայություն 37°C Աշխատանքային համակարգեր՝ հեղուկի մակարդակի որոշում, պաշտպանում բախումից, ռեագենտների մնացորդային քանաքների որոշում, նմուշի նոսրացում: Հիշողություն՝ անսահմանափակ: Լույսի աղբյուր՝ Հալոգեն լամպ կամ համարժեք Թորած ջրի ծախս՝ ոչ ավել քան 4.0 լ /ժՕպտիկական համակարգ՝ ոչ պակաս քան 8 ֆիլտրՖիլտրների տիրույթներ՝ 330-350նմ, 400-410նմ, 440-460նմ, 500-510նմ, 540-550նմ, 570-580նմ, 620-630նմ, 660-680նմ Աշխատանքի կառավարումը՝ Ներկառուցված կամ արտաքին համակարգչի միջոցով Ծրագիր՝ Ռուսերեն Տվյալների Ներմուծում/Արտահանում՝ RS232 կամ USB, LIS համակարգին միանալու հնարավորություն Օգտագործման պայմանները՝ Աղմուկ աշխատանքի ժամանակ ՝ ոչ ավել քան 80 դբՔաշը՝ ոչ ավել քան 80կգՀոսանքի ծախս՝ ոչ ավել քան 1200VA Որակի սերտիֆիկատներ ՝ ISO 9001, ISO 13485,CESեղադրում, միացում, փորձարկում և պատվիրատուի անձնակազմի ուսուցանում տեղում: Երաշխիք՝ 1 տարի:

Չափման մեթոդներ՝ ոչ պակաս քան ծայրակետ, կինետիկ, ֆիկսված ժամանակ:Կատարվող հետազոտություններ՝ ոչ պակաս քան ASAT,ALAT,Glucose, Crea,Urea,UA,Chol,TG,Alb,TP,Microalbumin, Bil T,Bil D, HDL, LDL, Ethanol, Lactate, Urine proteine, Bile acid, Amylase, ALP, GGT, LDH, CK, CK-MB, HBDH, Lipase, ACP, Cholinesterase, Ca arsenazo, Mg,Fe,UIBC, Phosphorus, IgA, IgM, IgG, IgE, CRP, RF, ASo, C3, C4, Apolipoprotein,, Transferin, AntithrombinIII, HbA1C, D-Dimer, Cystatin C, Ferritin, Myoglobin, AFP, α1 microglobulinՉափման տիրույթ՝ 0-3,5 Abs Օգտագործվող ռեագենտներ՝ բաց համակարգ (ցանկացած արտադրողի ռեագենտներով աշխատելու հնարավորություն): Արտադրողականությունը՝ ոչ պակաս քան 100 թեստ 1 ժամում: Աշխատանքի ընթացքում նմուշի, հետազոտությունների և ռեագենտների ավելացնելու հնարավորություն: Աշխատանքային ծավալների տիրույթներ՝ Նմուշի ծավալը՝ 3-45 մկլ տիրույթում աշխատելու հնարավորություն, 0.5մկլ ճշգրտությամբ Ռեագենտի ծավալը՝ 30-400 մկլ տիրույթում

աշխատելու հնարավորություն, 1մկլ ճշգրտությամբ Ռեակցիոն ծավալը՝ 180-500 մկլ տիրույթում աշխատելու հնարավորություն Սարնարան ռեագենտների համար՝ սարնարանի առկայություն (24 ժամ աշխատելու հնարավորությամբ)Խառնիչ՝ խառնիչի առկայություն Թերմոստատ՝ ներկառուցված թերմոստատի առկայություն 37°C Աշխատանքային համակարգեր՝ հեղուկի մակարդակի որոշում, պաշտպանում բախումից, ռեագենտների մնացորդային քանաքների որոշում, նմուշի նոսրացում: Հիշողություն՝ անսահմանափակ: Լույսի աղբյուր՝ Հալոգեն լամպ կամ համարժեք Թորած ջրի ծախս՝ ոչ ավել քան 4.0 լ /ժՕպտիկական համակարգ՝ ոչ պակաս քան 8 ֆիլտր Ֆիլտրների տիրույթներ՝ 330-350նմ, 400-410նմ, 440-460նմ, 500-510նմ, 540-550նմ, 570-580նմ, 620-630նմ, 660-680նմ Աշխատանքի կառավարումը՝ Ներկառուցված կամ արտաքին համակարգչի միջոցով Ծրագիր՝ Ռուսերեն Տվյալների Ներմուծում/Արտահանում՝ RS232 կամ USB, LIS համակարգին միանալու հնարավորություն Օգտագործման պայմանները՝ Աղմուկ աշխատանքի ժամանակ ՝ ոչ ավել քան 80 դբ Քաշը՝ ոչ ավել քան 80կգ Հոսանքի ծախս՝ ոչ ավել քան 1200VA Որակի սերտիֆիկատներ ՝ ISO 9001, ISO 13485, CE Տեղադրում, միացում, փորձարկում և պատվիրատուի անձնակազմի ուսուցանում տեղում: Երաշխիք՝ 1 տարի:

Վերը նկարագրված գնման առարկան ոչ այլ ինչ է, քան բժշկական նշանակության ապրանք է և չի հանդիսանում ԱԱՀ-ով հարկման օբյեկտ, ինչը կհավաստի ցանկացած մասնագետ կամ փորձագետ, ուստիև Վիոլա ՍՊԸ-ի գնային առաջարկը չի կարող համարվել իրականությանը համապատասխանող:

«Ռոմա» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկը ներկայացվել է ճիշտ, այն փաստի հաշվառմամբ, որ տվյալ ապրանքը չի հանդիսանում ԱԱՀ-ով հարկվող և ներկայացված թիվն էլ ավելի փոքր է, քան «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ներկայացվածը և այն ավելի շահավետ է, քան առաջին տեղ զբաղեցրած անձի կողմից հայտարարագրվածը:

Վերոգրյալի հիման վրա և արդյունքում առաջին տեղ է զբաղեցրել «Վիոլա» ՍՊԸ-ն, «Ռոմա» ՍՊԸ-ի փոխարեն:»:

«Ռոմա» ՍՊԸ-ն 16.10.2019թ.-ին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««ՎԻՈԼԱ» ՍՊԸ-ն իր գրավոր դիրքորոշմամբ հայտնել է, որ տարիներ ի վեր զբաղվել է դոնորային արյան և դրա բաղադրամասերի, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների վաճառքի գործունեությամբ և մշտապես պետական բյուջե վճարել է նաև ԱԱՀ գումար:

«ՎԻՈԼԱ» ՍՊԸ-ն նաև ընդունել, որ ակնհայտ է, որ նշյալ տեխնիկան օգտագործվում է բժշկական նպատակներով:

«ՎԻՈԼԱ» ՍՊԸ-ն միայն մտավախություն է ունեցել, որ իր համար հստակ չէ, թե արդյոք գնման առարկան տեղավորվում է «բժշկական օգնություն և սպասարկում» կատեգորիայում, թե ոչ:

Այսպիսով, առնվազմ վեճ չկա, որ որ նշյալ տեխնիկան օգտագործվում է բժշկական նպատակներով, բացի այդ պարզ է, որ «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2019.18» ծածկագրով էլեկտրոնային գնանշման հարցում ընթացակարգի 25 չափաբաժնի մասով գնման առարկան «Մարտունի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին անհրաժեշտ է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու նպատակով: Մասնավորապես՝ ախտորոշիչ հետազոտությունների, բժշկական փորձաքննության անցկացման համար:

Այն, որ զուտ միայն բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու նպատակի ծառայող ապրանք լինելը բավարար է ԱԱՀ-ից ազատվելու համար վերահաստատել է նաև ՀՀ ՊԵԿ-ը իր պատասխան գրությամբ, որով «կամ» շաղկապով տարանջատել է երկու վավերապայմանները և սահմանել է, որ ներմուծվող բժշկական այն տեխնիկայի և սարքերի օտարմումը, որոնց ուղեկցող փաստաթղթերում (տեխնիկական անձնագիր, հաշվարկային և բեռնառաքման այլ փաստաթուղթ) նշված է, որ դրանք նախատեսված են բժշկական օգնության և սպասարկման համար վերաբերում է ԱԱՀ-ից ազատման արտոնությանը:

Տվյալ դեպքում, ի թիվս այլոց, մենք բողոքը քննող անձին ենք ներկայացրել նաև հաշվարկային և բեռնառաքման փաստաթղթեր, որոնցից ակնհայտ է, որ գնման առարկան նախատեսված է բժշկական օգնության և սպասարկման համար:

Փաստորեն միայն այն փաստը, որ «ՎԻՈԼԱ» ՍՊԸ-ն չի համարձակվել օգտվել այն արտոնությունից, որն իրեն հասանելի է, դեռևս արդարացում չէ գնման գործընթացում 20 տոկոս անիմաստ ավել գումար վճարելու համար: Նույն կերպ հնարավոր է, որ «ՎԻՈԼԱ» ՍՊԸ-ն օրենքի սխալ մեկնաբանության արդյունքում սխալ հաշվարկած լիներ ԱԱՀ-ի գումարը և 20 տոկոսի փոխարեն նշեր 200 տոկոս, ինչ է, գնորդը պետք է համակերպվեր այդ սխալի հետ, թե պետք է պահանջեինք, որ սխալ գնանշումը գնահատվի օրենքի տառին համապատասխանելու համատեքստում ևս:

Օրենքի տառին համապատասխանելը վերաբերում է, ոչ միայն բոլոր իմպերատիվ պահանջների պահպանմանը, այլ նաև բոլոր հնարավոր արտոնությունները հաշվի առնելուն:

Տվյալ դեպքում մեզ անհայտ պատճառներով «ՎԻՈԼԱ» ՍՊԸ-ն չի օգտվել իրեն հասանելի արտոնությունից, ինչը հանգեցրել է սխալ գնանշման և գնման ընթացակարգի արդյունքների խեղաթյուրմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ սույն հիմքերն ու հիմնավորումներ ևս հաշվի առնել և բավարարել «ՌՈՄԱ» ՍՊԸ- բողոքն ամբողջությամբ:»:

Ելնելով վերոգրյալից Բողոքներ քննող անձին խնդրել են՝

1. Անվավեր ճանաչել «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2019/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.09.2019թ.-ի թիվ 1 արձանագրությամբ կայացված որոշումը 25-րդ չափաբաժնի մասով,

2. Պարտավորեցնել «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2019/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին կայացնել «Ռոմա» ՍՊԸ-ին ընթացակարգի 25-րդ չափաբաժնով որպես առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշում:

3. Վերացնել «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2019/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը 25-րդ չափաբաժնի մասով «Վիոլա» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասով:

3. <u>«Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 23.09.2019թ.-ին գրությամբ դիմել է «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով «Ռոմա» ՍՊԸ-ի կողմից 20.09.2019թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև նիստերին:

4. <u>Երրորդ անձ՝ «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ թիվ «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2019/18» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 25-րդ

չափաբաժնի մասով առաջին մասնակից ճանաչված «Վիոլա» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ՝ Երրորդ անձ):

«Վիոլա» ՍՊԸ-ն 02.10.2019թ.-ին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետրյալը.

«20.09.2019թ. «Ռոմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է բողոք, որով վիճարկվել է «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված Մարտունու ԲԿ ՓԲԸ կարիքների համար բուժսարքավորումների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2019/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գհատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշումները: Ներկայացված բողոքով «Ռոմա» ՍՊԸ-ն խնդրել է նաև վերացնել ընթացակարգի 25-րդ չափաբաժնով «Վիոլա» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

«Ռոմա» ՍՊԸ-ի կողմից 20.09.2019թ. ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2019/66 բողոքի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ «Վիոլա» ՍՊԸ-ն գնային առաջարկում նշել է որպես վճարում ԱԱՀ, մինչդեռ ըստ Բողոքաբերի, տվյալ գործարքի գծով պետական բյուջե չի վճարվում ավելացված արժեքի հարկ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Հայտնում ենք, որ տարիներ ի վեր «Վիոլա» ՍՊԸ-ն բժշկական կազմակերպություններին դոնորային արյան և դրա բաղադրամասերի, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների վաճառքի գործունեությամբ զբաղվելով՝ նշված գործարքներից մշտապես պետական բյուջե վճարել է նաև ԱԱՀ գումար հետևյալ հիմնավորմամբ.

Ինչպես արդեն նշել ենք, «Վիոլա» ՍՊԸ-ն, զբաղվում է լաբորատոր ախտորոշիչ ծառայությունների մատուցման, ինչպես նաև բժշկական կազմակերպություններին դոնորային արյան և դրա բաղադրամասերի, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների վաճառքի գործունեությամբ, ընդ որում, գործունեության մեծ մասը ծավալում է պետական գնումների ոլորտում:

ՀՀ հարկային օրենսգրքի 307-րդ հոդվածի համաձայն՝ «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1317-Ն որոշման թիվ 3 հավելվածով սահմանվել է դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի,

պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների օտարման, բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման՝ ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակը:

Մասնավորապես ըստ վերոնշյալ որոշման 3-րդ հավելվածի 5-րդ կետի՝ ավելացված արժեքի հարկից ազատվում են դեղերի պատրաստման, բուժման, ախտորոշիչ հետազոտությունների անցկացման, վերականգնողական բուժման և այլ բնույթի բժշկական օգնության ու սպասարկման ծառայություններ իրականացնելու համար անհրաժեշտ բժշկական հատուկ և օժանդակ ապարատները, գործիքները, տրանսպորտային միջոցները, սարքերը և այլ սարքավորումները: Նույն կետով սահմանված է նաև, որ ավելացված արժեքի հարկից ազատման արտոնության կիրառության նպատակով բժշկական տեխնիկային դասվում են՝

1) Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 9018, 9019, 9020, 9022, 9023, 9402 խմբերին դասվող բժշկական տեխնիկան.

2) ներմուծվող այն տեխնիկան և սարքերը, որոնց ուղեկցող փաստաթղթերում (տեխնիկական անձնագիր, հաշվարկային և բեռնառաքման այլ փաստաթուղթ) նշված է, որ դրանք նախատեսված են բժշկական օգնության եւ սպասարկման համար:

Հարցը վերաբերվում է վերոնշյալ հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ներմուծվող տեխնիկայի և սարքերի ավելացված արժեքի հարկից ազատման արտոնության կիրառմանը ԱԱՀ վճարող հանդիսացող կազմակերպության կողմից, այն դեպքում, երբ ներմուծվող տեխնիական դասվում է Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 9027 խմբին (սարքեր եւ ապարատուրա՝ ֆիզիկական կամ քիմիական անալիզի համար (օրինակ՝ բևեռաչափեր, բեկումաչափեր, սպեկտրաչափեր, գազա կամ ծխաանալիզատորներ). սարքեր եւ ապարատուրա՝ մածուցիկության, ծակոտկենության, ընդարձակման, մակերեսային ձգունության չափման կամ հսկման համար եւ նույնանման սարքեր ու ապարատուրա. սարքեր եւ ապարատուրա՝ ջերմության, ձայնի կամ լույսի չափման կամ հսկման համար (ներառյալ էքսպոնոմետրերը) Միկրոտոմներ):

Նշված սարքավորումների խմբին են դասվում նաեւ բժշկական լաբորատոր ախտորոշիչ սարքավորումներ, որոնց ուղեկցող տեխնիական փաստաթղթերում որպես

կանոն նշված է, որ դրանք նախատեսված են «IN VITRO» ախտորոշման համար (այսինքն՝ փորձանոթի մեջ, մարդու մարմնից դուրս):

«Վիոլա» ՍՊԸ-ն նշված դասակարգչի 9027 խմբին պատկանող տեխնիկան իրացնում է բժշկական կազմակերպություններին ու թեև ակնհայտ է, որ նշյալ տեխնիկան օգտագործվում է բժշկական նպատակներով, սակայն միանշանակ չի, որ այն տեղավորվում է «բժշկական օգնություն և սպասարկում» հասկացության տակ, քանի որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով տրված «Բժշկական օգնություն և սպասարկում» հասկացության սահմանումը (այն է՝ «1. Բժշկական օգնություն և սպասարկում՝ բնակչությանը խորհրդատվական, կանխարգելիչ, բուժական, դեղորայքային օգնության ցուցաբերում, ախտորոշիչ հետազոտությունների, վերականգնողական բուժման, բժշկական փորձաքննության անցկացում, հարբժշկական և ոչ բուժական բնույթի այլ ծառայությունների մատուցում») ևս սպառիչ պատասխան չի տալիս մեզ հուզող հարցին, հետևյալ պատճառաբանություններից ելնելով՝

ա) ավելացված արժեքի հարկից ազատման արտոնության կիրառության նպատակով արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 9027 խումբը չի նշված վերոնշյալ հավելվածի 5-րդ կետի 1-ին ենթակետում թվարկված խմբերում,

բ) երկար տարիներ հանդիսնալով բժշկական տեխնիկայի և սարքերի ներկրող, կարող եմ հավաստիացնել, որ օպտրերկրյա մատակարար կազմակերպությունները բժշկական լաբորատոր ախտորոշիչ սարքավորումներն ուղեկցող փաստաթղթերում (տեխնիկական անձնագիր, հաշվարկային և բեռնառաքման այլ փաստաթուղթ) որպես կանոն չեն նշում, որ դրանք նախատեսված են բժշկական օգնության և սպասարկման համար, թեև շատ դեպքերում, ելնելով տեխնիկայի բնույթից, ակնհայտ է, որ այն օգտագործվելու է բժշկական նպատակներով: Բժշկական օգնության եւ սպասարկման համար նախատեսված ներմուծվող տեխնիկա եւ սարքեր սահմանումը չափազանց լայն ընդգրկում ունի հարկային պարտավորությունների հստակեցման բնագավառում տարաձայնություններից խուսափելու համար:

Նշված հարցին վերջնական պատասխան ստանալու համար «Վիոլա» ՍՊԸ-ն 01.10.2019թ. դիմել է ՀՀ ՊԵԿ /գրության պատճեն կցվում է/՝ խնդրելով հայտնել, թե ի վերջո, արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 9027 խմբերին դասվող ներմուծված բժշկական տեխնիկան ՀՀ տարածքում

բշկակական կազմակերպություններին իրացնելու դեպքում արդյոք ազատվում է ԱԱՀ-ից, թե՝ ոչ:

Գտնում ենք, որ առանց ՀՀ ՊԵԿ-ի վերոհիշյալ հարցի վերաբերյալ համապատասխան պաշտոնական պարզաբանման իրավաչափ չէ «Ռոմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի քննությունը, առավել ևս բավարարումը՝ հիմք ընդունելով միայն Բողոքաբերի բերված փաստարկները:

Ելնելով վերոգրյալից՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք բողոքի քննության շրջանակներում կամ սպասել «Վիոլա» ՍՊԸ-ի կատարված հարցման պատասխանին, կամ կատարել հարցում ՀՀ ՊԵԿ՝ նշված խնդրի վերաբերյալ պաշտոնական դիրքորոշում ստանալու համար:»:

Ի լրումն «Վիոլա» ՍՊԸ-ի դիրքորոշման, 16.10.2019թ.-ի գրությամբ հայտնել է հետևյալը.

««Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ս.թ. հոկտեմբերի 1-ին հարցում էր կատարվել ՀՀ ՊԵԿ, որով ՀՀ ՊԵԿ-ին խնդրել էինք հայտնել, թե արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 9027 խմբերին դասվող ներմուծված տեխնիկան ՀՀ տարածքում բշկակական կազմակերպություններին իրացնելու դեպքում արդյոք ազատվում է ԱԱՀ-ից, թե՝ ոչ:

Այնուհետև <<Ռոմա>> ՍՊԸ-ի կողմից 20.09.2019թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/66 բողոքի քննության վերաբերյալ նշանակված նիստի ընթացքում պարզ դարձավ, որ 30.09.2019թ. նույնաբովանդակ հարցում է ներկայացրել նաև գնումների հետ կապված բողոքներ քննող անձը:

Ուսումնասիրելով գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած ՀՀ ՊԵԿ 14.10.2019թ. դիրքորոշումը, հանգում ենք հետևյալ եզրակացությանը.

Ըստ նշված գրության՝ ՀՀ ՊԵԿ-ը ամփոփ հայտնել է հետևյալը. «ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատվում են դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների օտարումը, բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը: Նույն կետով սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանված է ՀՀ կառավարության 05.10.2017թ. N1317-Ն որոշմամբ, որի N3 հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ բժշկական տեխնիկա են համարվում

դեղերի պատրաստման, բուժման, ախտորոշիչ հետազոտությունների անցկացման, վերականգնողական բուժման և այլ բնույթի բժշկական օգնության ու սպասարկման ծառայություններ իրականացնելու համար անհրաժեշտ բժշկական հատուկ և օժանդակ ապարատները, գործիքները, տրանսպորտային միջոցները, սարքերը և այլ սարքավորումը: Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնության կիրառության նպատակով բժշկական տեխնիկային դասվում են՝

1) Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 9018, 9019, 9020, 9022, 9023, 9402 խմբերին դասվող բժշկական տեխնիկան,

2) ներմուծվող այն տեխնիկան և սարքերը, որոնց ուղեկցող փաստաթղթերում (տեխնիկական անձնագիր, հաշվարկային և բեռնառաքման այլ փաստաթուղթ) նշված է, որ դրանք նախատեսված են բժշկական օգնության և սպասարկման համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ ԱԱՀ-ից ազատման արտոնությունը վերաբերում է միայն այն բժշկական տեխնիկայի օտարմանը, որը դասվում է ԵՏՄ ԱՏԳ ԱԱ դասակարգչի 9018, 9019, 9020, 9022, 9023, 9402 խմբերին կամ ներմուծվող բժշկական այն տեխնիկայի և սարքերի օտարմանը, որոնց ուղեկցող փաստաթղթերում (տեխնիկական անձնագիր, հաշվարկային և բեռնառաքման այլ փաստաթուղթ) նշված է, որ դրանք նախատեսված են բժշկական օգնության և սպասարկման համար»:

ՀՀ ՊԵԿ-ի 14.10.2019թ. տրամադրված պատասխանից պարզ է դառնում, որ.

1. Ինչպես արդեն նշել ենք, «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից մատակարարվում են Եվրա¬սի-ական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 9027 խմբին դասվող տեխնիկա, իսկ ՀՀ ՊԵԿ վերոհիշյալ գրությամբ նշված դասակարգիչին պատկանող տեխնիկան չի հանդիսանում ԱԱՀ վճարումից ազատված ապրանքատեսակ և այդ դասակարգիչի վրա չի տարածվում ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունները:

2. «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ներմուծվող սարքերի տեխնիկական անձնագրերում /կցվում է/ նշված չէ, որ դրանք նախատեսված են բժշկական օգնության և սպասարկման համար:»:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձին խնդրել են «Ռոմա» ՍՊԸ-ի կողմից 20.09.2019թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/66 բողոքը մերժել, քանի որ «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ներմուծվող սարքերը ազատված չեն ԱԱՀ-ից և դրանց վրա չի տարածվում ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունները:

5. **<u>ԳԲՔԱ-ԼՕ-2019/66 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բուժսարքավորումների և պարագաների ձեռքբերման նպատակով 30.08.2019թ.-ին հայտարարավել է «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2019/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել՝ «Վիոլա» ՍՊԸ-ն և «Ռոմա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 11.09.2019թ.-ի կայացրած նիստի թիվ 1 արձանագրության համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են սահմանված պահանջներին:

Նույն արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 25-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Վիոլա» ՍՊԸ-ն, իսկ «Ռոմա» ՍՊԸ-ն զբաղեցրել է 2-րդ տեղը:

Գնման առարկա հանդիսացող 25-րդ չափաբաժնում ընդգրկված «ավտոմատ բիոքիմիական վերլուծիչ» ապրանքի համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը. «Ավտոմատ բիոքիմիական վերլուծիչ» *(Չափման մեթոդներ՝ ոչ պակաս քան ծայրակետ, կինետիկ, ֆիկսված ժամանակ: Կատարվող հետազոտություններ՝ ոչ պակաս քան ASAT,ALAT,Glucose, Crea,Urea,UA,Chol,TG,Alb,TP,Microalbumin, Bil T,Bil D, HDL,LDL,Ethanol, Lactate,Urine proteine, Bile acid, Amylase, ALP,GGT,LDH,CK,CK-MB,HBDH,Lipase, ACP,Cholinesterase, Ca arsenazo, Mg,Fe,UIBC, Phosphorus, IgA,IgM,IgG,IgE, CRP,RF,ASo,C3,C4,Apolipoprotein,,Transferin, AntithrombinIII,HbA1C, D-Dimer, Cystatin C, Ferritin, Myoglobin, AFP, α1 microglobulin. Չափման տիրույթ՝ 0-3,5 Abs. Օգտագործվող ռեագենտներ՝ բաց համակարգ (ցանկացած արտադրողի ռեագենտներով աշխատելու հնարավորություն): Արտադրողականությունը՝ ոչ պակաս քան 100 թեստ 1 ժամում: Աշխատանքի ընթացքում նմուշի, հետազոտությունների և ռեագենտների ավելացնելու հնարավորություն: Աշխատանքային ծավալների տիրույթներ՝ Նմուշի ծավալը՝ 3-45 մկլ*

փիրույթում աշխատելու հնարավորություն, 0.5մկլ ճշգրտությամբ: Ռեագենտի ծավալը՝ 30-400 մկլ փիրույթում աշխատելու հնարավորություն, 1մկլ ճշգրտությամբ: Ռեակցիոն ծավալը՝ 180-500 մկլ փիրույթում աշխատելու հնարավորություն: Սարնարան ռեագենտների համար՝ սարնարանի առկայություն (24 ժամ աշխատելու հնարավորությամբ): Խառնիչ՝ խառնիչի առկայություն: Թերմոստատ՝ ներկառուցված թերմոստատի առկայություն 37°C: Աշխատանքային համակարգեր՝ հեղուկի մակարդակի որոշում, պաշտպանում բախումից, ռեագենտների մնացորդային քանաքների որոշում, նմուշի նոսրացում: Հիշողություն՝ անսահմանափակ: Լույսի աղբյուր՝ Հալոգեն լամպ կամ համարժեք: Թորած ջրի ծախս՝ ոչ ավել քան 4.0 լ /ժ: Օպտիկական համակարգ՝ ոչ պակաս քան 8 ֆիլտր: Ֆիլտրների փիրույթներ՝ 330-350նմ, 400-410նմ, 440-460նմ, 500-510նմ, 540-550նմ, 570-580նմ, 620-630նմ, 660-680նմ: Աշխատանքի կառավարումը՝ Ներկառուցված կամ արտաքին համակարգչի միջոցով: Ծրագիր՝ Ռուսերեն: Տվյալների Ներմուծում/Արտահանում՝ RS232 կամ USB, LIS համակարգին միանալու հնարավորություն: Օգտագործման պայմանները՝ Աղմուկ աշխատանքի ժամանակ ՝ ոչ ավել քան 80 դբ: Քաշը՝ ոչ ավել քան 80կգ: Հոսանքի ծախս՝ ոչ ավել քան 1200VA: Որակի սերտիֆիկատներ ՝ ISO 9001, ISO 13485,CE: Տեղադրում, միացում, փորձարկում և պատվիրատուի անձնակազմի ուսուցանում տեղում: Երաշխիք՝ 1 տարի:):

Ընթացակարգի 25-րդ չափաբաժնում ընդգրկված «ավտոմատ բիոքիմիական վերլուծիչ» ապրանք մատակարարելու համար «Վիոլա» ՍՊԸ-ն ներկայացրել է 4.593.600 ՀՀ դրամ գումար՝ ԱԱՀ-ն ներառյալ և 3.828.000 ՀՀ դրամ գումար՝ առանց ԱԱՀ, գնային առաջարկ, իսկ «Ռոմա» ՍՊԸ-ն ներկայացրել է 4.360.000 ՀՀ դրամ գումար՝ առանց ԱԱՀ:

Ի պատասխան Բողոքներ քննող անձի 30.09.2019թ. թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/16004-2019 գրության, ՀՀ ՊԵԿ-ը 14.10.2019թ.-ի թիվ Մ-45957-2019 գրությամբ հայտնել են, որ ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատվում են դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների օտարումը, բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը: Նույն կետով սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանված է ՀՀ կառավարության 05.10.2017թ. N 1317-Ն որոշմամբ, որի N 3 հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ բժշկական տեխնիկա են համարվում դեղերի պատրաստման, բուժման, ախտորոշիչ հետազոտութ-

յունների անցկացման, վերականգնողական բուժման և այլ բնույթի բժշկական օգնության ու սպասարկման ծառայություններ իրականացնելու համար անհրաժեշտ բժշկական հատուկ և օժանդակ ապարատները, գործիքները, տրանսպորտային միջոցները, սարքերը և այլ սարքավորումը: Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնության կիրառության նպատակով բժշկական տեխնիկային դասվում են՝

1) Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 9018, 9019, 9020, 9022, 9023, 9402 խմբերին դասվող բժշկական տեխնիկան,

2) ներմուծվող այն տեխնիկան և սարքերը, որոնց ուղեկցող փաստաթղթերում (տեխնիկական անձնագիր, հաշվարկային և բեռնառաքման այլ փաստաթուղթ) նշված է, որ դրանք նախատեսված են բժշկական օգնության և սպասարկման համար:

ՀՀ ՊԵԿ-ը նշել է, որ ԱԱՀ-ից ազատման արտոնությունը վերաբերում է միայն այն բժշկական տեխնիկայի օտարմանը, որը դասվում է ԵՏՄ ԱՏԳ ԱԱ դասակարգչի 9018, 9019, 9020, 9022, 9023, 9402 խմբերին կամ ներմուծվող բժշկական այն տեխնիկայի և սարքերի օտարմանը, որոնց ուղեկցող փաստաթղթերում (տեխնիկական անձնագիր, հաշվարկային և բեռնառաքման այլ փաստաթուղթ) նշված է, որ դրանք նախատեսված են բժշկական օգնության և սպասարկման համար:

«Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 15.10.2019թ.-ի թիվ 356 գրությամբ հայտնել է, որ «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2019/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 25-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկան Պատվիրատուին անհրաժեշտ է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու նպատակով, մասնավորապես՝ ախտորոշիչ հետազոտությունների, բժշկական փորձաքննության անցկացման և այլ բժշկական բնույթի ծառայությունների մատուցման համար:

«Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված URIT-8021A ապրանքի տեխնիկական անձնագրի (այսուհետ՝ Անձնագիր) 2.1 կետի համաձայն՝ “Прибор URIT-8021A – измерительный прибор для клинической биохимии с автоматическим режимом работы. Дискретное/опционное получение данных, приоритет STAT с управлением от компьютера. Прибор URIT-8021A предназначен для использования с реагентами для количественного измерения определенных химических веществ в сыворотке, моче и цереброспинальной жидкости. Необходимо внимательно ознакомиться с руководством до использования прибора, так как прибор представляет собой сложное техническое изделие”.

Նույն Անձնագրի 2.2 կետի համաձայն՝ “Измерительный прибор рассчитан на профессиональных специалистов и может использоваться для клинических исследований в больницах, клиниках и лабораториях”.

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Ռոմա» ՍՊԸ-ի կողմից 20.09.2019թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է, ենթակա է բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի 3-րդ նախադասության համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

«ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2019/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերի (այսուհետ՝ Հրավեր) 2-րդ հավելվածում սահմանվել է, որ եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ

վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բուժսարքավորումների և պարագաների ձեռքբերման նպատակով 30.08.2019թ.-ին հայտարարված «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2019/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել՝ «Վիոլա» ՍՊԸ-ն և «Ռոմա» ՍՊԸ-ն:

Գնման առարկա հանդիսացող 25-րդ չափաբաժնում ընդգրկված «ավտոմատ բիոքիմիական վերլուծիչ» ապրանքի համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը. «Ավտոմատ բիոքիմիական վերլուծիչ» ապրանքը (Չափման մեթոդներ՝ ոչ պակաս քան ծայրակետ, կինետիկ, ֆիկսված ժամանակ: Կատարվող հետազոտություններ՝ ոչ պակաս քան ASAT,ALAT,Glucose, Crea,Urea,UA,Chol,TG,Alb,TP,Microalbumin, Bil T,Bil D, HDL,LDL,Ethanol, Lactate,Urine proteine, Bile acid, Amylase, ALP,GGT,LDH,CK,CK-MB,HBDH,Lipase, ACP,Cholinesterase, Ca arsenazo, Mg,Fe,UIBC, Phosphorus, IgA,IgM,IgG,IgE, CRP,RF,ASo,C3,C4,Apolipoprotein,,Transferin, AntithrombinIII,HbA1C, D-Dimer, Cystatin C, Ferritin, Myoglobin, AFP, α1 microglobulin. Չափման տիրույթ՝ 0-3,5 Abs. Օգտագործվող ռեագենտներ՝ բաց համակարգ (ցանկացած արտադրողի ռեագենտներով աշխատելու հնարավորություն): Արտադրողականությունը՝ ոչ պակաս քան 100 թեստ 1 ժամում: Աշխատանքի ընթացքում նմուշի, հետազոտությունների և ռեագենտների ավելացնելու հնարավորություն: Աշխատանքային ծավալների տիրույթներ՝ Նմուշի ծավալը՝ 3-45 մկլ տիրույթում աշխատելու հնարավորություն, 0.5մկլ ճշգրտությամբ: Ռեագենտի ծավալը՝ 30-400 մկլ տիրույթում աշխատելու հնարավորություն, 1մկլ ճշգրտությամբ: Ռեակցիոն ծավալը՝ 180-500 մկլ տիրույթում աշխատելու հնարավորություն: Սառնարան ռեագենտների համար՝ սառնարանի առկայություն (24 ժամ աշխատելու հնարավորությամբ): Խառնիչ՝ խառնիչի առկայություն: Թերմոստատ՝ ներկառուցված թերմոստատի առկայություն 37°C: Աշխատանքային համակարգեր՝ հեղուկի մակարդակի որոշում, պաշտպանում բախումից, ռեագենտների մնացորդային քանաքների որոշում, նմուշի նոսրացում: Հիշողություն՝ անսահմանափակ: Լույսի աղբյուր՝ Հալոգեն լամպ կամ համարժեք: Թորած ջրի ծախս՝ ոչ ավել քան 4.0 լ /ժ: Օպտիկական համակարգ՝ ոչ պակաս քան 8 ֆիլտր: Ֆիլտրների տիրույթներ՝ 330-350նմ, 400-410նմ, 440-460նմ, 500-510նմ, 540-550նմ, 570-580նմ, 620-630նմ, 660-680նմ: Աշխատանքի կառավարումը՝ Ներկառուցված կամ արտաքին

համակարգչի միջոցով: Ծրագիր՝ Ռուսերեն: Տվյալների Ներմուծում/Արտահանում՝ RS232 կամ USB, LIS համակարգին միանալու հնարավորություն: Օգտագործման պայմանները՝ Աղմուկ աշխատանքի ժամանակ ՝ ոչ ավել քան 80 դբ: Քաշը՝ ոչ ավել քան 80կգ: Հոսանքի ծախս՝ ոչ ավել քան 1200VA: Որակի սերտիֆիկատներ ՝ ISO 9001, ISO 13485,CE: Տեղադրում, միացում, փորձարկում և պատվիրատուի անձնակազմի ուսուցանում տեղում: Երաշխիք՝ 1 տարի:):

Ընթացակարգի 25-րդ չափաբաժնի համար «Վիոլա» ՍՊԸ-ն ներկայացրել է 4.593.600 ՀՀ դրամ գումար՝ ԱԱՀ-ն ներառյալ և 3.828.000 ՀՀ դրամ գումար՝ առանց ԱԱՀ, գնային առաջարկ, իսկ «Ռոմա» ՍՊԸ-ն ներկայացրել է 4.360.000 ՀՀ դրամ գումար՝ առանց ԱԱՀ:

Ընթացակարգի 25-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Վիոլա» ՍՊԸ-ն, իսկ «Ռոմա» ՍՊԸ-ն զբաղեցնելել է 2-րդ տեղը:

ՀՀ ՊԵԿ-ը 14.10.2019թ.-ի թիվ Մ-45957-2019 գրությամբ հայտնել են, որ ԱԱՀ-ից ազատման արտոնությունը վերաբերում է միայն այն բժշկական տեխնիկայի օտարմանը, որը դասվում է ԵՏՄ ԱՏԳ ԱԱ դասակարգչի 9018, 9019, 9020, 9022, 9023, 9402 խմբերին կամ ներմուծվող բժշկական այն տեխնիկայի և սարքերի օտարմանը, որոնց ուղեկցող փաստաթղթերում (տեխնիկական անձնագիր, հաշվարկային և բեռնառաքման այլ փաստաթուղթ) նշված է, որ դրանք նախատեսված են բժշկական օգնության և սպասարկման համար:

«Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 15.10.2019թ.-ի թիվ 356 գրության համաձայն՝ «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2019/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 25-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկան անհրաժեշտ է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու նպատակով, մասնավորապես՝ ախտորոշիչ հետազոտությունների, բժշկական փորձաքննության անցկացման և այլ բժշկական բնույթի ծառայությունների մատուցման համար:

«Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված URIT-8021A ապրանքի տեխնիկական անձնագրի (այսուհետ՝ Անձնագիր) 2.1 կետի համաձայն՝ “Прибор URIT-8021A – измерительный прибор для клинической биохимии с автоматическим режимом работы. Дискретное/опционное получение данных, приоритет STAT с управлением от компьютера. Прибор URIT-8021A предназначен для использования с реагентами для количественного измерения определенных химических веществ в сыворотке, моче и цереброспинальной

жидкости. Необходимо внимательно ознакомиться с руководством до использования прибора, так как прибор представляет собой сложное техническое изделие”.

Նույն Անձնագրի 2.2 կետի համաձայն՝ “Измерительный прибор рассчитан на профессиональных специалистов и может использоваться для клинических исследований в больницах, клиниках и лабораториях”.

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրակացության, որ «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2019/18» ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին՝ գնային առաջարկի 4-րդ սյունակում ԱԱՀ-ն ենթակա չէր նշման, քանի որ գնման առարկա հանդիսացող 25-րդ չափաբաժնում ընդգրկված «ավտոմատ բիոքիմիական վերլուծիչ» ապրանքը նախատեսված է բժշկական օգնության և սպասարկման համար, ինչպես նկարագրված է Անձնագրի 2.1 և 2.2 կետերում: Իսկ նման պայմաններում, հիմք ընդունելով ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրված տեղեկատվությունը, առ այն, որ ԱԱՀ-ից ազատման արտոնությունը վերաբերում է ներմուծվող բժշկական այն տեխնիկայի և սարքերի օտարմանը, որոնց ուղեկցող փաստաթղթերում (տեխնիկական անձնագիր, հաշվարկային և բեռնառաքման այլ փաստաթուղթ) նշված է, որ դրանք նախատեսված են բժշկական օգնության և սպասարկման համար, ուստի «ավտոմատ բիոքիմիական վերլուծիչ» ապրանքը, որպես բժշկական ապրանք, վերոնշյալ հիմքով ազատվում է ԱԱՀ-ից, քանի որ ինչպես արդեն նշվեց այդ ապրանքի ուղեկցող փաստաթղթում՝ տեխնիկական անձնագրում նշված է՝ “Измерительный прибор рассчитан на профессиональных специалистов и может использоваться для клинических исследований в больницах, клиниках и лабораториях”.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին

անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն երկու փաստաթղթի համար՝ գնային առաջարկը և հայտի ապահովումը: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանություններն ենթակա են շտկման:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ռոմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարաման:

Անդրադառնալով գործով ներգրավված Երրորդ անձի ներկայացուցիների այն պնդմանը, որ «Վիոլա» ՍՊԸ-ն 25-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկը ներկայացնելիս դրա մեջ ներառել է նաև ապրանքի ԱԱՀ-ն, քանի որ այդ ապրանքն ազատված չէ ԱԱՀ-ից, այն ընդգրկված է ԵՏՄ ԱՏԳԱ դասակարգչի 9027 ծածկագրի ներքո (որում նշված սարքավորումը նախատեսված է ֆիզիկական կամ քիմիական ախտորոշում իրականացնելու համար, մասնավորապես. գործիքներ և սարքավորումներ մածուցիկության, ծակոտկենության, ընդլայնման, մակերևույթի լարվածության կամ ջերմության, ձայնի կամ լույսի քանակը չափելու կամ վերահսկելու համար), ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված URIT-8021A (автоматический биохимический анализатор) ապրանքի Անձնագրի 2.1 կետի համաձայն այն նախատեսված է “для использования с реагентами для количественного измерения определенных химических веществ в сыворотке, моче и цереброспинальной жидкости”, իսկ ԵՏՄ ԱՏԳԱ դասակարգչի 9027 ծածկագրի ներքո նկարագրվում է այլ ապրանքատեսակ:

Ինչ վերաբերում է Ընկերության բողոքում նշված «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2019/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը 25-րդ չափաբաժնի մասով «Վիոլա» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասով վերացնելու պահանջին, ապա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում պետք է հրապարակի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

Վերը նշված կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2019/18» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն չի հրապարակվել, որպիսի պայմաններում հնարավոր չէ «Ռոմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը այդ մասով բավարարել և պայմանագիր կնքելու մասին Հանձնաժողովի կողմից կայացված որոշումը դադարեցնելու մասին որոշում կայացնել:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ռոմա» ՍՊԸ-ի կողմից 20.09.2019թ.-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/66 ծածկագրով ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

1. Պարտավորեցնել «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ 2019/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 11.09.2019թ.-ի թիվ 1 արձանագրությամբ «Վիոլա» ՍՊԸ-ին 25-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ 2019/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին 25-րդ չափաբաժնի մասով կայացնել «Ռոմա» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշում:

3. Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ